ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս տնօրեն Գ.Գևորգյանի մյուս կողմից «ՃՇՇՁ » ԲԲԸ

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը/

ՏՆՕՐԵՆ՝ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Հաշվապահական հաշվառում»մասնագիտությունների պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 30 տեղ հատկացնել ուսանողների ուսումնա-արտադրակա ն պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատութ յան , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետհամաձայնեցնե պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում /սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության /հաստատության, կազմակերպության/ տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար:

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը, կազմակերպությանը/ ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը:

3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով, սկսած **2021** թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները:

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ	«ՃՇՇՁ» ԲԲԸ
2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ	Ք.ՀՐԱԶԴԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ
ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ	ՀԵՌ. **0223-604-94**
ՀԵՌ. 060-27-32-32	
Հ/Հ160254503016	Հ/Հ 2476400040620999
ՏՆՕՐԵՆ______________Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՏՆՕՐԵՆ ______________Է.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ ___________Ա. ՍԵՄԻՐՋՅԱ	
«---8---» ----------01----------2021թ.	«----------»-------------------------2021թ.